


ՄԵՂԷ Է ՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՍՐԲԱՊՂՇԵԼ

Posted on May 9, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



Մեր Պարզեւ Դաւիթեան , «Լուսաբաց», 9 Մայիս 2015

Նախագահ Սերժ Սարգսեանի եւ իր իշխանապետութեան տրամադրութեան տակ դրուեցան հայ ազգի ուժականութիւնը ներկայացնող ամեն տեսակի եւ մակարդակի գործ ու աշխատանք, որպէսզի յաջող դառնար հարիւրամեակի նշումը Հայկական Ցեղասպանութեան: Շատեր նոյնիսկ արդար գտան հայրենի իշխանութիւններուն կողմէ կիրարկուած բանտարկութեան եւ ծեծի միջոցները արքիւիսթներու դէմ, որոնք կը փորձէին խաղաղ միջոցներով լսելի դարձնել ժողովուրդին տնտեսական ցաւը փտածութեան (corruption), անգործութեան եւ կաշառակերութեան դէմ:

... ամօթ է եւ անընդունելի, որ Սարգսեանի «Հանրապետական» կուսակցութեան վարչա-ծելը իրեն ենթակայ դարձուցած է Հայաստանի դատական եւ օրէնսդիր մարմինները, ճիշդ այնպէս ինչպէս կ'ընէին Լատին Ամերիկայի եւ արաբական տապալած բռնատիրութիւնները:

Հարիւրամեակի նշումի յաջողութեան պատիւն ու վարկը (credit) յուսանք որ չեն դառնար թագադրութեան միջոց մեր հայրենի իշխանութիւններուն, որ անոնք շարունակեն իրենց մենաշնորհեալ դասակարգի վարչաձեւը եւ ժողովրդավար չըլլալու ամօթալի աշխատելաձեւը:

Մեր Պարզեւ Դաւիթեան , «Լուսաբաց», 9 Մայիս 2015

Նախագահ Սերժ Սարգսեանի եւ իր իշխանապետութեան տրամադրութեան տակ դրուեցան հայ ազգի ուժականութիւնը ներկայացնող ամեն տեսակի եւ մակարդակի գործ ու աշխատանք, որպէսզի յաջող դառնար հարիւրամեակի նշումը Հայկական Ցեղասպանութեան: Շատեր նոյնիսկ արդար գտան հայրենի իշխանութիւններուն կողմէ կիրարկուած բանտարկութեան եւ ծեծի միջոցները արքիւիսթներու դէմ, որոնք կը փորձէին խաղաղ միջոցներով լսելի դարձնել ժողովուրդին տնտեսական ցաւը փտածութեան (corruption), անգործութեան եւ կաշառակերութեան դէմ:

... ամօթ է եւ անընդունելի, որ Սարգսեանի «Հանրապետական» կուսակցութեան վարչա-ծելը իրեն ենթակայ դարձուցած է Հայաստանի դատական եւ օրէնսդիր մարմինները, ճիշդ այնպէս ինչպէս կ'ընէին Լատին Ամերիկայի եւ արաբական տապալած բռնատիրութիւնները:

Հարիւրամեակի նշումի յաջողութեան պատիւն ու վարկը (credit) յուսանք որ չեն դառնար թագադրութեան միջոց մեր հայրենի իշխանութիւններուն, որ անոնք շարունակեն իրենց մենաշնորհեալ դասակարգի վարչաձեւը եւ ժողովրդավար չըլլալու ամօթալի աշխատելաձեւը:

Սարգիս Շահինեան, պատուոյ նախագահը Հայ-Չուիցերիական Ընկերակցութեան, վերջերս հարցազրոյցի մը ընթացքին, որ ձայնասփռուեցաւ հայրենի «Կենտրոն» հեռատեսիլի կայանէն, ներ-

կայացնելով միտք, կշիռ եւ համբաւ ունեցող հայ իմաստուն մարդու բոլոր տուեալները, քաջութիւնն ունեցաւ ըսելու թէ ամօթ կը զգայ հայրենի իշխանութիւններու անվայել գործելակերպէն, երբ բռնութեամբ կամ բանտարկութեամբ կը լռեցուին ընդդիմադիրներն ու քննադատները: Եւ որպէս օրինակ՝ յիշեց Վարդան Պետրոսեանի պարագան, որ իր արուեստագետի տաղանդը կը գործածեր Փարիզի եւ Երեւանի մէջ եւ քիչ մը ամէն տեղ, երգիծաբանութեամբ եւ հեգնանքով (satire) անհանգիստ դարձնելով հայրենի մենատերերը. եւ երբ ինքնաշարժի արկածի մը առթիւ ան ձերբակալուեցաւ Հայաստանի մէջ, անոր պատիժը եղաւ այնքան խիստ, որ կարծէք զինք կը պատժէին իր «երկար լեզուին» համար եւ ոչ՝ արկածին պատճառաւ: Շահինեան յիշեց նաեւ «Նախախորհրդարան»-ի գործիչներուն ծեծի ենթարկուիլն ու բանտարկութիւնը, եւ վրդովմով յայտնեց թէ անոնց դէմ եղած վարուելակերպը անօրէն է եւ անընդունելի, ամօթ նկատելով զայն մեր հայրենի ժողովրդավարութեան:

Իսկապէս ամօթ է եւ անընդունելի, որ Սարգսեանի «Հանրապետական» կուսակցութեան վարչաձեւը իրեն ենթակայ դարձուցած է Հայաստանի դատական եւ օրէնսդիր մարմինները, ճիշդ այնպէս ինչպէս կ'ընէին Լատին Ամերիկայի եւ արաբական տապալած բռնատիրութիւնները: Ցաւալի երեւոյթ է նաեւ, որ այս իշխանութիւնը, որպէսզի շարունակէ միահեծան իշխել, դերերու բաժանում կը կատարէ՝ Հայաստանը տալով հարուստներուն կամ «օլիկարգ» կոչուողներուն, Արցախը՝ մեռնելու պատրաստ հերոսներուն, իսկ Սփիւռքն ալ՝ Հայ Դատի զինուորներուն:

Նախորդ յօդուածով մեծ «պրաւօ» մը տուած էինք մեր համազգային ճիգերով տեղի ունեցած հանդիսութիւններուն որոնցմով նշուեցաւ հարիւրամեակը Հայկական Ցեղասպանութեան: Ի՛նչ լաւ պիտի ըլլար Նոյն տեսակի «պրաւօ» մը կարելի ըլլար տալ նախագահ Սարգսեանին եւ իր հետեւորդներուն, եթէ մէկդի դնէին անոնք ազգային ակեր գործող շահախնդրութիւնն ու կաշառակերութիւնը եւ ընդունէին կամ անդրադառնային թէ համազգային Նոյն ուժերով, եռանդով եւ ազգային փրկութեան համապարփակ նախարարաց խորհուրդով կարելի է փրկել մեր ժողովուրդը անգործութենէ, աղքատութենէ եւ արտագաղթէ:

Կ'ըսուի թէ վերջերս Սփիւռքի Նախարարութեան կողմէ առաջարկուած է, որ եթէ մէկ միլիոն սփիւռքահայ հայաստանեան դրամատուներուն մէջ հազարական տոլարի հաշիւ բանայ կամ գետեղէ, դրամատուները կը զօրանան եւ տնտեսութիւնն ալ կը զարգանայ: Մակերեսային իմաստով առնուած՝ մարդ պիտի ըսէ թէ գէշ գաղափար չէ առաջարկուածը: Բայց, դրամատան մէջ դրուող գումար մը կախեալ է հանրութեան մօտ այդ դրամատան ունեցած վստահութիւն ներշնչող համբաւէն, բան մը՝ որ դժբախտաբար այդքան ալ ներշնչող չի թուիր, ըստ Հայաստան գործուղողուածներու թելադրանքներուն...:

Սփիւռքահայը աքսորեալ ու պարտադիր ներկայութիւն ունեցաւ Միջին Արեւելեան կարգ մը երկիրներու մէջ, ուր անկախ դատարաններ չկային եւ օրէնքը շարունակ կը խոնարհէր ուժին եւ բռնատերին առջեւ: Ցաւալի է անոր տեսնել այդպիսի իրավիճակի կրկնութիւնը իր արիւնով ու քրտինքով կերտուած պետական կառոյցին մէջ, որ երազներով կանգնեցաւ հազարաւոր տարիներու ընթացքին:

Մե՛ղք Է սրբութիւնը սրբապղծել:

